ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-COP17-26/01

ք.Երևան «23» «02» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս հիմնադիր-տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված «ՇՄՆ-COP17-25/01-2» ծածկագրով պայմանագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում՝ փուլային կարգով:

1.3. Ծառայությունը մատուցվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել ծառայության համար վճարված գումարը, ինչպես նաև պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատել կամ գրավոր հիմանվորմամբ մերժել Կատարողի կողմից մշակված ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագիրը, որը ներառում է տվյալ փուլում մատուցման ենթակա ծառայության տեխնիկական բնութագիրը, գինը և ժամկետները: Սույն կետում սահմանված ժակետում ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագիրը չհաստատելու կամ գրավոր հիմնավորմամբ չմերժելու դեպքում փաստաթուղթը համարվում է հաստատված: Հաստատելու դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված անհապաղ միջոցներ ողջամիտ ժամկետում ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով նախատեսված ֆինանսական միջոցների ամբողջ ծավալի ապահովման համար:

2.2.4. Օրենսդրությամբ սահմանված միջոցներ ձեռնարկելու արդյունքում ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով նախատեսված ֆինանսական միջոցներն ապահովելու դեպքում՝ նախատեսված գնի

90 (իննսուն) տոկոսը հինգ աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Կատարողի բանկային հաշվին:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագիրը ու հանձնման-ընդունման արձանագրությունը նախապես, մինչև Պատվիրատուին ներկայցնելը, քննարկել և համաձայնեցնել «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի հետ:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի հիման վրա մշակել ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի հստակ նկարագիրը, որը ներառում է տվյալ փուլում մատուցման ենթակա ծառայության տեխնիկական բնութագիրը, գինը և ժամկետները: Այն Պատվիրատուի կողմից հաստատվելու դեպքում՝ կնքվում է փուլային համաձայնագիր, ինչը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4.2. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագիրը հաստատման ներկայացնել Պատվիրատուին:

2.4.3. Ծառայությունը մատուցել յուրաքանչյուր փուլի նկարագրին համապատասխան:

2.4.4. Պատվիրատուի գրավոր հիմնավորումների հիման վրա հինգ աշխատանքային օրվա ընթացքում լրամշակել ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագիրը ու կրկին ներկայացնել Պատվիրատուի հաստատմանը: Այդ դեպքում ևս Պատվիրատուն պարտավոր է պահպանել պայմանագրի 2.2.3 և 2.2.4 կետերով սահմանված ընթացակարգը:

2.4.5. Պայմանագրի 2.2.4 կետով նախատեսված գումարը ստանալուց հետո Կատարողը մեկնարկում է ծառայությունների մատուցումը:

2.4.6. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.7. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու թղթային օրինակ (Հավելված №2) կամ դրանք ներկայացնում է էլեկտրենային ստորագրությամբ և ուղեկցող գրությամբ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է տվյալ փուլում մատուցված ծառայության նկարագրին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը, իսկ էլեկտրենային ստորագրությամբ ներկայացվելու դեպքում՝ Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը ձևավորվելու է Պատվիրատուի կողմից հաստատված ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի նկարագրերով և դրանց հիման վրա կնքվելիք փուլային համաձայնագրերում նախատեսված գների հանրագումարով: Գինը ներառում է նաև Կատարողին վճարման ենթակա հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Պատվիրատուն Կատարողին վճարում է ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով հաստատված գնի 90 (իննսուն) տոկոսը, որպես կանխավճար՝ Պայմանագրով սահմանված կարգով անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ապահովելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման տվյալ փուլի հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

4.3. Կանխավճարի մարումը սահմանված կարգով իրականացնելուց հետո, ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով հաստատված գնի 10 (տասը) տոկոսը Պատվիրատուն վճարում է ծառայության մատուցման տվյալ փուլի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում: Կատարողի նկատմամբ կիրառվող տուգանքներն ու տույժերը Պատվիրատուն կարող է հաշվանցել վճարման ենթակա գումարներից:

4.4. Պատվիրատուն ծառայության դիմաց վճարումները կատարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5. Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով հաստատված գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն հիմնավորված չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման տվյալ փուլի նկարագրով հաստատված ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում փուլային համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12. Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված №3) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը, 1.1-ը, 2-ը, 2.1-ը և 3-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագր(եր)ի կնքման միջոցով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Լեոյի 1
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ»
ՀՀ 900011023281	ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152
Էլ.փոստ – minenv@env.am	Էլ.փոստ – support@dopingspace.com
Շրջակա միջավայրի նախարարության	«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
գլխավոր քարտուղար	հիմնադիր-տնօրեն
Սերգո Աթանեսյան	***Հայկ Սիմոնյան***
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«23» «02» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Սերգո Աթանեսյան
_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
հիմնադիր-տնօրեն
Հայկ Սիմոնյան
_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության				
			մատուցման	
h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	հասցեն	Ժամկետը
1	79951112	2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայություններ տեխնիկական բնութագիրը համաձայն Հավելված №1.1-ի	ք.Երևան, Պատվիրատուի նշված հասցեներով	23.02.2026-20.12.2026 թթ.

Հավելված №1.1
«23» «02» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի

ՀԱՄԱՌՈՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայությունների

Մատուցման ենթակա ծառայությունների համառոտ նկարագրերը

1. **Պլանավորում և համակարգում.**

- հիմնական ժամանակացույցի մշակում և հետևում,
- բյուջեի պատրաստում, կանխատեսում և մշտադիտարկում,
- հանդիպման անցկացման վայրի հետ կապված աշխատանքների համակագում (ներառյալ ազգային մատակարարների և պետական մարմինների հետ),
- սահմանել ժամանակացույցեր/վերջնաժամկետներ, արտակարգ իրավիճակների պլանավորում:

2. **Հանդիպման անցկացման վայր և ենթակառուցվածք[1].**

- կազմակերպչի կարիքների և մատակարարների միջև համակարգում,
- մատակարարների հավաքագրում ըստ անհրաժեշտության,
- միջոցառման անցկացման վայրի նախագծում և կահավորում՝ բազմաթիվ հանդիպումների համար նախատեսված սենյակներով և առանձնացված տարածքներով,
- կողմերի և կազմակերպությունների համար ժամանակավոր գրասենյակների ստեղծում/հատկացում,
- տաղավարների, ժամանակավոր կառույցների տեղադրում,
- մուտքի անցակետերում անվտանգության աշխատակիցների հետ աշխատանքների համակարգում[2],
- ընդունելությունների, հասարակական միջոցառումների համակարգում[3],
- կազմակերպիչների կողմից պահանջվող արդյունքների և տեխնիկական բնութագրերի համակարգում (մատակարարների հետ),
- դեկորատիվ դիզայնին առնչվող աշխատանքների իրականացում (բրենդավորում, ցուցանակների տեղադրում),
- կահույքի վարձույթ, տեղադրում և դասավորում[4],
- ժամանակավոր կառույցների (օրինակ՝ վրանների) տրամադրում, տեղադրում և կառավարում,
- լրացուցիչ էներգահամակարգերի (գեներատորներ, կաբելային համակարգեր) մատակարարում և տեղադրում[5],
- բրենդինգի և ցուցանակների պատրաստում հանդիպման անցկացման ողջ տարածքում[6]:

3. **Ծառայությունների մատուցում պատվիրակներին.**

- օդանավակայան(ներ)ում դիմավորման տաղավարների տեղադրում միջազգային ժամանումների համար,

---

[1] Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշների՝ COP17 համաժողովի անցկացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պատրաստվածություն:

[2] COP17 համաժողովի միջոցառումների կազմակերպման վայրերում տրանսպորտի և մասնակիցների անվտանգության ապահովում՝ ներառյալ միջոցառման հիմնական վայրում երթևեկության հոսքերի կազմակերպումը, միջոցառման անցկացման հիմնական վայրերում շտապ օգնության և հակահրդեհային ծառայությունների հասանելիություն: Ծառայության մատուցման ընթացքում Կատարողը կարող է համագործակցել պետական և համայնքային մարմինների հետ:

[3] Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած պահանջների՝ COP17 համաժողովի անցկացման հիմնական վայրերում մասնակիցներին բարձրորակ սննդի կազմակերպում և ապահովում: COP17 համաժողովի անցկացման հիմնական վայրերում սպասարկող անձնակազմին անվճար սննդով ապահովում (ոստիկաններ, պետական և համայնքային մարմինների աշխատակիցներ և այլն):

[4] Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի ներկայացրած չափանիշներին և Կատարողի համաձայնությամբ՝ COP17 համաժողովի անցկացման հիմնական վայրում աուդիո, վիդեո վիզուալիզացիա և համաժողովի նիստերի ընթացքում համաժամանակյա (սինխրոն) թարգմանչական ծառայություններ ապահովող սարքերի ու սարքավորումների ապահովում ու ընթացիկ սպասարկում:

[5] COP17 համաժողովի անցկացման հիմնական վայրերում մաքրման, աղբահանության, էլեկտրաէներգիայի, ջրի, ինտերնետ կապի և համանման այլ ծառայությունների հասանելիության կազմակերպում՝ համագործակցելով պետական և համայնքային մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց հետ:

[6] Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող COP17 համաժողովի մասին հնարավորինս շատ մարդկանց տեղեկացնելու նպատակով: Միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական հարցերում ներգրավված տրանսպորտի և այլ ատրիբուտների բրենդավորում:

- տրանսպորտային միջոցների տրամադրում (միկրոավտոբուսներ, vip մեքենաներ),
- մասնակիցներին ապահովվել լոգիստիկ հարցերով[7]:

4. Անձնակազմ և գործառնություններ.

- անձնակազմի և կամավորների[8] հավաքագրում և վերապատրաստում,
- անձնակազմի ժամացուցակի կառավարում, բրիֆինգներ, առաջադրանքների տրամադրում,
- աշխատանքային ժամանակացույցի կառավարում, ճեպազրույցների անցկացում,
- մատակարարների գործունեության վերահսկողություն և համակարգում հանդիպումների սկզբից մինչև ավարտը:

5. Ցուցահանդեսների անցկացում.

- տաղավարների դասավորության դիզայն և լոգիստիկա,
- դիզայնի և սարքավորումների հետ կապված հարցեր առաջանալու դեպքում հաղորդակցություն շահագրգիռ կողմերի և կազմակերպությունների հետ անգլերեն և ֆրանսերեն լեզուներով,
- համակարգում հովանավորների հետ (տեխնիկական հարցեր, բրենդավորում, տեղադրում, դիզայն և առաքում),
- աջակցություն տարբեր երկրների ցուցահանդեսի մասնակիցներին:

6. Առաքում և պահեստավորում.

- միջազգային և ներքին բեռնափոխադրումների համակարգում,
- մաքսային ընթացակարգեր, մաքսազերծում և փաստաթղթավորում,
- նյութերի և սարքավորումների պահեստավորում և անվտանգ բաշխում,
- գույքագրման և առաքման աշխատանքների իրականացում:

7. Միջոցառման ավարտից հետո ծառայությունների տրամադրում.

- տարածքի վերականգնում[9],
- ֆինանսական հաշտեցում և հաշիվ-ապրանքագրերի կառավարում[10],
- վերջնական հաշվետվություն, որը ներառում է քաղված դասերը և կատարողականի հիմնական ցուցանիշները[11]:

8. Հանդիպման «կանաչապատում».

- համոզվել, որ համաժողովը եղել է պլանավորված և համակարգված՝ կենտրոնանալով շրջակա միջավայրի համար անվտանգ գործելակերպի վրա, ինչպիսիք են վերամշակումը, թափոնների կրճատումը,
- հանդիպման ավարտին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

9. Այլ պայմաններ.

- ծառայությունները կարող են լրացվել կամ լրամշակվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ,
- նշված թվարկումները կապված չեն ծառայությունների մատուցման հերթականության կամ որևէ այլ պարտադիր հանգամանքի հետ,
- կատարողը մշակում և պատվիրատուի հաստատմանն է ներկայացնում վերոնշյալ ծառայությունների մատուցման փուլերի նկարագրերը:

---

[7] COP17 պատվիրակների և օտարերկրյա պաշտոնատար անձանց համար հասանելի հյուրանոցային ծառայությունների ամրագրման կազմակերպում: Պետական արարողակարգի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ Պատվիրատուն հաստատում է առանձին պատվիրակների և օտարերկրյա պաշտոնատար անձանց հյուրանոցային ծառայությունների ապահովման չափանիշները:

[8] COP17 համաժողովի կազմակերպչական ծառայությունների բոլոր փուլերում Կատարողը կարող է ներգրավել կամավորների:

[9] Միջոցառումների անցկացման հիմնական վայրում Կատարողի կողմից տեղադրված ենթակառուցվածքների և ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, տեղափոխման և մաքրման աշխատանքների կազմակերպում:

[10] Կատարողը բանակցությունների, քննարկումների և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներով լուծում է COP17 համաժողովի միջոցառումների կազմակերպմանն իր հետ կնքված պայմանագրերի հիման վրա ներգրավված անձանց և իր միջև առաջացած պայմանագրային վեճերը: Պատվիրատուին այս կետով տեղեկատվություն տրամադրվում է ըստ անհրաժեշտության:

[11] Այս և «Հանդիպման «կանաչապատում» բաժնի 2-րդ կետն իրականացնելիս Կատարողը, հիմք ընդունելով փուլային մատուցված ծառայությունների հաստատված նկարագրերը և հանձնման-ընդունման ակտերը, կարող է ամփոփել ու կազմել մեկ ընդհանուր փաստաթղթով:

Հավելված №2
«23» «02» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Լեոյի 1
ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ»
ՀՀ 900011023281	ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02893152

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2026թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «23» «02» 2026թ.
Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-COP17-26/01
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2026թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №2.1
«23» «02» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «23» «02» 2026 թվականին կնքված № ՇՄՆ-COP17-26/01 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2026 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Հավելված №3
«23» «02» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ֆինանսական գործակալի անվանումը հայտնում է, որ.

1. Շրջակա միջավայրի նախարարության և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի միջև «23» «02» 2026թ. կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և «_____»_-ի միջև «___» «_____» 2026թ. կնքվել է «_____» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

«___» «_____» 2026 թ.